Նախագիծ

Լրամշակված

*Կ-451-23.01.2020-ՏՏԳԲ-011/0*

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 65-րդ հոդվածում լրացնել նոր՝ 7-րդ մաս~~հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով~~.

«7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ծրագիրը որպես սոցիալական որակելու չափանիշները սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարությունը:»:

***Հոդված 2.*** Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Ծրագիրը որպես սոցիալական որակելու չափանիշները սահմանվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: